ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 4-ը

Ղազախստան ք. Ալմաթի գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Մայրանուշ Մանվելյան – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի պետ:

Արմինե Ասրյան - ՊԵԿ մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի պետ:

Տաթևիկ Դանիելյան - ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի գլխավոր հարկային տեսուչ (ժ.թ.):

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ղազախստան, քաղաք Ալմաթի, հուլիսի 30-ից օգոստոսի 4-ը:

3. **Հրավիրող կողմը**

Հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության (IOTA), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) և Հարկային մարմիններիներ-ամերիկյան կենտրոնի (CIAT) հետ համատեղ մշակված Հարկային մարմինների միջազգային հարցմանը (ISORA) նվիրված տարածաշրջանային աշխատաժողովը կազմակերպվել է ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից: Աշխատաժողովի մասնակից երկրներն էին Հայաստանը, Վրաստանը, Ղրղզստանը, Մոնղոլիան, Տաջիկստանը, Ուզբեկստանը, իսկ աշխատաժողովը վարում էին Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ISORA-ի նպատակներից են հարկային վարչարարության վերաբերյալ համադրելի և ստանդարտացված տվյալների տրամադրումը և վերլուծությունը, ինչը հանգեցնում է

հարկային մարմնի կարողությունների բարելավմանը, հարկային մարմնի ղեկավար կազմին հարկային մարմնի գործունեությունը գնահատելու և դրա բարելավման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը:

ISORA (https://data.rafit.org) հարթակում ՀՀ ՊԵԿ կողմից լրացվող տեղեկատվությունն ընդգրկում է իրականացվող հարկային վարչարարությանն առնչվող մի շարք հարցեր:

2023 թվականին ISORA հետազոտությունն անց է կացվելու ավելի լայն հարցաշարով: Այդ տեսանկյունից կարևորվում էր ՊԵԿ աշխատակիցների մասնակցությունն աշխատաժողովին, քանի որ դրա շրջանակներում մեծ ուշադրություն էր դարձվում նոր հարցերի լրացման մեթոդաբանությանը:

Հարթակը տարեցտարի ավելի արդիական է դառնում, և ներկայացված տվյալներից օգտվում են հայտնի միջազգային կառույցները՝ հարկային մարմինների գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով վերլուծությունների, վարկանիշային աղյուսակների կազմման և զեկույցների հրապարակման համար և առանձնահատուկ կարևորություն է տրվում միջազգային տեղեկատվական հարթակներում ՊԵԿ գործունեության վերաբերյալ տվյալների ճշգրիտ ներկայացմանը և վարկանիշային աղյուսակներում ՊԵԿ բարձր դիրքերի ապահովմանը:

5. Քննարկված թեմաները

Աշխատաժողովի ընթացքում փորձագետների կողմից ներկայացվել է ISORA հարթակում տեղեկատվության լրացման աշխատանքների համակարգման մասին լավագույն փորձը, հարցաշարով պահանջվող յուրաքանչյուր տվյալի վերաբերյալ մանրամասն նկարագրություն, ISORA հարթակի տվյալների հիման վրա հարկային վարչարարության կատարողականի գնահատման և կառավարման վերաբերյալ այլ երկրների փորձը և այլն: Յուրաքանչյուր թեմայի շուրջ եղել են նաև առանձին խմբային քննարկումներ:

Քննարկումները վերաբերում էին հարկային վարչարարությանն առնչվող մի շարք հարցերին, մասնավորապես՝

1. հարկային ծախսեր,

2. հարկային եկամուտներ,
3. մարդկային ռեսուրսներ,
4. հարկ վճարողների խմբեր,
5. գործառնական ցուցիչներ,
6. հարկ վճարողների և այլ շահառուների փոխազդեցություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Քննարկումների ընթացքում երկրների միջև եղել է փորձի փոխանակում մի շարք թեմաների շուրջ՝ մասնավորապես.

- ինչպե՞ս են իրականացվում տվյալների հավաքագրման և լրացման աշխատանքները ISORA հարթակում,
- ինչպե՞ս են հետագայում օգտագործվում հավաքագրված տվյալները (օրինակ՝ ռազմավարության մշակման գործում, վարչարարության դյուրինացման մեխանիզմների մշակում և այլն),
- ինչպե՞ս է չափվում տվյալ երկրի հարկային մարմնի գործունեության արդյունավետությունը և ինչպես կարող են ISORA-ի տվյալներն օգտագործվել կատարվող աշխատանքներում:

7. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայրանուշ Մանվելյան

Արմինե Ասրյան

Տաթևիկ Դանիելյան

09.08.2023թ.